



Ե Ր Կ Շ Ա Բ Ա Թ Ա Թ Ե Ր Թ

ՀՀ Դաշնակցության Արցախի Կենտրոնական Կոմիտեի պաշտոնաթերթ

Մենք համացանցում

www.aparaj.am



ՀՀ ոչ մի իշխանություն իրավունք չունի հրաժարվելու Արցախի ժողովրդի անվտանգությունն ապահովելու առաքելությունից

Արցախի Հանրապետության Ազգային ժողովի հայտարարությունը.

«Վերջին մի քանի ամիսների զարգացումները, տարբեր ուժային կենտրոնների և միջազգային կազմակերպությունների՝ ադրբեջանա-ղարաբաղյան հակամարտության կարգավորման հեռանկարների, Արցախի ապագայի հետ կապված հայտարարություններն ու հնչեցված դիրքորոշումները լուրջ մտահոգություն են առաջացրել Արցախում և համայն հայության շրջանակներում:

Արցախի Հանրապետության Ազգային ժողովը, արտահայտելով Արցախի ժողովրդի հավաքական կամքը, հարկ է համարում այս բախտորոշ ժամանակահատվածում ի լուր աշխարհի արձանագրել և փաստել հետևյալը.

Արցախը երբեք չի եղել և չի լինելու անկախ Ադրբեջանի կազմում: Հենց այս գաղափարը պետք է լինի ադրբեջանա-ղարաբաղյան հակամարտության կարգավորման հիմքում:

Ցանկացած փորձ՝ Արցախը բռնակցելու Ադրբեջանին, կհանդիսանա միջազգային իրավունքի կոպտագույն խախտում, հայ ժողովրդի նոր ցեղասպանության իրագործման պաշտոնական արտոնագիր, հետևաբար՝ նման բովանդակությամբ փաստաթղթերը Արցախի Հանրապետության համար անընդունելի են:

Վերահաստատելով, որ մեր բոլոր հաջողությունների ու ձեռքբերումների և պետականաշինության առանցքային հիմքերից է հանդիսանում Հայաստան-

Արցախ-Սփյուռք եռամիասնությունը, Արցախի Հանրապետության Ազգային ժողովը հայտարարում է.

Հայաստանի Հանրապետության ոչ մի իշխանություն իրավունք չունի հրաժարվել Արցախի ժողովրդի անվտանգությունն ապահովելու առաքելությունից կամ ընդունելի համարել որեւէ փաստաթուղթ, որտեղ ինքնիշխան Արցախի Հանրապետության գոյությունը կասկածի տակ կդրվի: Պահանջում ենք Հայաստանի Հանրապետության իշխանություններից՝ միջազգային հարթակներում հանդես գալ հայկական երկու հանրապետությունների միասնական շահերը պաշտպանելու դիրքերից՝ հիմք ընդունելով առկա հիմնարար փաստաթղթերը, մասնավորապես՝ Հայաստանի Հանրապետության Անկախության հռչակագիրը և Գերագույն խորհրդի 1992 թվականի հուլիսի 8-ի պատմական որոշումը:

- Կոչ ենք անում աշխարհասփյուռ հայությանը՝ շարունակել սատարել Արցախին, պաշտպանել Արցախի ժողովրդի իրավունքները և շահերը տարբեր երկրներում և միջազգային ատյաններում՝ համակողմանի նպաստելով Արցախի Հանրապետության ճանաչման գործին:

Արցախի Հանրապետությունը կողմնակից է կայուն խաղաղությանը և, հետևաբար, նաև խաղաղության պայմանագրի ստորագրմանը միտված քայլերին, սակայն Հայաստանի Հանրապետության իշխանությունները պետք է վերապահումով մոտենան Ադրբեջանի Հանրապետության տարածքային ամբողջականության ճանաչմանը՝ հաշվի առնելով ադրբեջանա-ղարաբաղյան հակամարտության չկարգա-

վորված լինելու հանգամանքը:

- Մեզ համար անընդունելի է Արցախի Հանրապետության ինքնիշխանությունը, մեր ինքնորոշման իրավունքը և դրա իրացման փաստը կասկածի տակ դնող ցանկացած փաստաթուղթ և առաջարկ, քանի որ այն չի արտացոլում պատմաիրավական իրողությունները: Միջազգային հանրությունը պարտավոր է հարգել արցախահայության պահանջը, քանզի այն համապատասխանում է միջազգային իրավունքի հիմնարար սկզբունքներին և նորմերին:

- Հաշվի առնելով Ռուսաստանի պատմական դերակատարությունը մեր տարածաշրջանում խաղաղության և կայունության ապահովման գործում և, մասնավորապես, ագրեսոր Ադրբեջանի կողմից մեզ պարտադրված 2020 թվականի 44-օրյա պատերազմի դադարեցմանն անձամբ ՌԴ Նախագահ Վ. Պուտինի անմիջական և գործուն մասնակցությունը՝ դիմում ենք Ռուսաստանի Դաշնությանը՝ Արցախի ժողովրդի անվտանգությունն ապահովելու հանձնառությունը շարունակելու խնդրանքով: Այն ամրապնդելու նպատակով առաջարկում ենք հաշվի առնելով Արցախի ժողովրդին սպառնացող գոյաբանական իրական վտանգները՝ ներդնել քաղաքական և ռազմական լրացուցիչ մեխանիզմներ:

Մեր պայքարը շարունակական է, դիրքորոշումը՝ անփոփոխ, և արտահայտում է աշխարհասփյուռ հայության հավաքական կամքը և ամբողջությամբ բխում է Արցախի Հանրապետության Ազգային ժողովի 2022թ. ապրիլի 14-ի հայտարարությամբ նախանշված սկզբունքներից»:

Պատման ենթակա է յուրաքանչյուր փաստաթուղթ, որն Արցախը կներառի Ադրբեջանի կազմում. Արթուր Մուսիյան

ԱՅ Աժ «Հայ Յեղափոխական Ղաշ-նակցություն» խմբակցության ղեկավար Արթուր Մուսիյանի ելույթը՝ հոկտեմբերի 30-ին կայացած արտահերթ նիստի ժամանակ.

նր, իրավունքներին, եկեղեցիներին, շիրիմներին, հազարավոր մեր նահատակ հերոսների արյունով սրբազործված հողին ու հայրենիքին:

44-օրյա աղետալի պատերազմից հետո մեր երկիրը կանգնել է նոր իրողությունների եւ մարտահրավերների առաջ: Ադրբեջանի ղեկավարը հայտարարում է, որ Լեռնային Ղարաբաղի խնդիր չկա, իրենք լուծել են այն:

Միջազգային տարբեր դերակատարների կողմից շրջանառվում են տարբեր փաստաթղթեր, տարբերակներ, որոնց հիմքում ընկած են ոչ այնքան միջազգային իրավունքի համամարդկային նորմերը, այլև տարբեր ուժային կենտրոնների տարածաշրջանային շահերը: Այդպիսի քննարկվող փաստաթղթերից մեկը վերջին օրերին ՀՀ Ազգային ժողովում պատռվեց մեր գործընկերոջ կողմից: Այո՛, մենք փաստում ենք, որ անընդունելի, պատման եւ շարժման ենթակա է յուրաքանչյուր փաստաթուղթ, ում կողմից էլ այն ներկայացված լինի, որն Արցախը կներառի Ադրբեջանի կազ-

մում, որովհետեւ դա պարունակում է 21-րդ դարում նոր ցեղասպանության կամ Արցախի հայաթափման վտանգ:

Այս ամենը թույլ չտալու համար կա մեկ ճանապարհ՝ համախմբվելը, դառնալ մեկ բուն կազմակերպություն՝ մեր իրավունքներին: Սա երկարատև պայքարի ճանապարհ է:

Հայ ժողովրդից առավել ոչ մեկը չգիտի խաղաղության արժեքը: Իրական խաղաղության հասնելու համար պետք է հրաժարվել խաղաղության պատրանքից:

Պետք է ձեռքբերվել թույլի, անճարակի, արհեստականորեն սերմանվող կոմպլեքսներից ու մարդկանցից: Հաջողության կհասնենք միայն մեր իրավունքների համար անսահանջ պայքարող համահայկական ներուժով եւ Արցախ-Հայաստան-Սփյուռք եռամիասնությամբ»:



«Այսօր Աժ արտահերթ նիստը եւ Վեբ-ռաժնեղի հրապարակի հանրահավաքը ունեն մեկ օրակարգ, եւ այդ օրակարգի էությունն ու բովանդակությունը շատ պարզ են: Արցախահայությունը պատրաստ է տեր կանգնելու ազատ եւ անկախ ապրելու իր իրավունքին, ինչպես եւ շուրջ երեք տասնամյակ առաջ Արցախյան ազգային-ազատագրական շարժման օրերին:

Անշուշտ, փոխվել են ժամանակները, փոխվել են իրողությունները, փոխվում է աշխարհակարգը: Անփոփոխ է մնացել արցախցու կամքն ու վճռականությունը՝ տեր կանգնելու իր պատմությանը:

Մեր ընտրած ճանապարհն անշրջելի է. Արթուր Թովմասյան



Հոկտեմբերի 30-ին ԱՅ Աժ-ում գումարվել է արտահերթ նիստ: Նիստի բացումն արել է ԱՅ Աժ նախագահ Արթուր Թովմասյանը:

«ԱՅ Աժ «Կանոնակարգ օրենք»-ի 37-րդ հոդվածի պահանջներին համապատասխան՝ ս.թ. հոկտեմբերի 27-ին ԱՅ Աժ պատգամավորների կողմից Աժ է ներկայացվել պաշտոնական գրություն՝ ԱՅ Աժ արտահերթ նիստ գումարելու նախաձեռնությամբ:

Առաջարկվել է 2022թ. հոկտեմբերի 30-ին՝ ժամը 15:00-ին, գումարել ԱՅ Աժ արտահերթ նիստ՝ օրակարգում ընդգրկելով ԱՅ Աժ պատգամավորների նախաձեռնությամբ ներկայացված ԱՅ Աժ հայտարարությունը»,-ասել է Ա. Թովմասյանը:

Նիստին գրանցվել են 33 պատգամավորներ, բացականեր չեն եղել: Նիստին առաջինը ելույթ է ունեցել ԱՅ Աժ նախագահ Արթուր Թովմասյանը: Իր ելույթում նա մասնավորապես ասել է.

«Արցախը հայկական պահելու, Արցախի ժողովրդի ինքնորոշման իրավունքն իրացնող հանրահավաքի ամենակրոստեր մասնակից, ամենատարեց մասնակից, արցախցի՛, սա քո՛ հանրահավաքն է, եւ նրա կազմակերպիչը դո՛ւ ես: Միտելի՛ հայրենակից, եթե դու այս պահին տանն ես, ապա շտապի՛ր քո տեղը զբաղեցնել Վեբ-ռաժնեղի հրապարակում, քո խաղաղասեր խրամատում: Սա նաեւ քո՛ հանրահավաքն է, ու նախաձեռնողներից, կազմակերպիչներից մեկն էլ դու ես:

ՌԴ նախագահ Վլադիմիր Պուտինին, ԱՄՆ նախագահ Ջո Բայդենին, Ֆրանսիայի նախագահ Էմանուել Մակրոնին, Իրանի Իսլամական Հանրապետության նախագահ Իբրահիմ Ռահիսին, ՀՀ վարչապետ Նիկոլ Փաշինյանին, ՌԴ, ԱՄՆ, Ֆրանսիայի, մեր հարեւան ԻԻՀ ժողովուրդներին, ՀՀ մեր հայրենակիցներին, աշխարհի բոլոր երկրների առաջնորդներին ու ժողովուրդներին. այս փոքրիկ աշխարհատարածքը իրենից վտանգ չի ներկայացնում, բայց վտանգված է Արցախի ժողովրդի լիարժեք ապրելու ու գոյատևելու իրավունքը: Որպեսզի արցախցին ապրի, արարի, ստեղծագործի իր հայրենիքում, ճանաչե՛ք նրա ինքնորոշման իրավունքը:

Հայ ժողովրդի հավաքական ապագան այսօր որոշվում է նաեւ Արցախում: Դիմում

եմ ողջ հայ ժողովրդին՝ միասնաբար նեցուկ կանգնել արցախահայությանը, շարունակել աշակցել նրա ազատագրական պայքարին եւ հասնել նրա ինքնորոշման իրավունքի լիակատար իրացմանը: Այսօր հայոց պետականությունը կանգնած է ազգային ինքնությանն ու լինելիությանը սպառնացող լուրջ վտանգների առջև: Այսօր, առավել քան երբեք, հայ ժողովուրդը պետք է շարունակի գործել միասնական, միակամ ու միաբան:

Ադրբեջանի ռազմաքաղաքական ղեկավարության հավակնությունները մեր հայրենիքի նկատմամբ գուրկ են պատմական, իրավական ու բարոյական հիմքերից, քանզի Արցախը երբեք անկախ Ադրբեջանի մաս չի եղել եւ չի կարող լինել: Ներկա դրությամբ առաջնահերթ խնդիրը երկրի հուսալի անվտանգության ապահովումն է, որն իրականացնում են ՌԴ խաղաղապահ զորակազմն ու ԱՅ ՊԲ ուժերը: Հավատացած ենք, որ աշխարհաքաղաքական բարդ ու անկանխատեսելի իրավիճակին եւ արտաքին մարտահրավերներին դիմակայելու համար առաջնային ու կարևոր գործն պետք է հանդիսանան համաժողովրդական համախմբվածությունն ու համերաշխությունը:

Հավաստիացնում եմ, որ մենք շարունակելու ենք մեր ջանքերը Արցախի ժողովրդի ինքնորոշման ու անվտանգության համար մղված արցախյան ազատամարտի արյունքների պաշտպանության, խնդրի խաղաղ ու արդարացի լուծման հասնելու ուղղությամբ: Ինչպես ԱՅ նախագահն է նախօրեին հայտարարել, պետք է մեկընդմիջտ մերժվել այն առաջարկներն ու սկզբունքները, որոնք ժխտում են Արցախի ժողովրդի ինքնորոշման իրավունքը, զրկում հակամարտության արդարացի կարգավորման հեռանկարներից եւ կասկածի տակ դնում Արցախի գոյությունը: Մենք պետք է տեր կանգնենք 1991թ. սեպտեմբերի 2-ի Հանրապետության հռչակման օրվան, 1991թ. դեկտեմբերի 10-ի Անկախության հանրաքվեին եւ 1992թ. հունվարի 6-ի Անկախության հռչակագրին:

Լիաժողույս ենք, որ հոկտեմբերի 31-ին Սոչիում կայանալիք եռակողմ հանդիպմանը չի ստորագրվի այնպիսի փաստաթուղթ, որը կարող է անտեսել արցախյան հիմնախնդրի գոյությունը, հարվածի տակ դնել արցախյան հիմնախնդրի կարգավորման հեռանկարը եւ սահմանափակել Արցախի ժողովրդի ինքնորոշման իրավունքի իրացումը: Այսօր համայն հայության ջանքերն ու նպատակները պետք է ուղղված լինեն հայրենիքի՝ Արցախի ու Հայաստանի անվտանգությունն ու խաղաղությունը ամրապնդելուն: Մեր ընտրած ճանապարհն այսօր էլ անշրջելի է, քանի որ այն արդար է եւ սրբազործված մեր հերոս նահատակների արյամբ:

Խնդրում եմ մեկ րոպե լռությամբ հարգել արցախյան գոյապայքարի եւ ՀՀ սահմանների պաշտպանության համար նահատակված քաջորդիների հիշատակը:

Արցախը եղել է, կա ու լինելու է: Ընտրիակալություն»:

Արցախի գոյության փաստացի երաշխիքը Արցախում ապրող հայն է. Ս. Պետրոսյան

ԱՅ Աժ պատգամավոր Մարտի Պետրոսյանի ելույթը՝ հոկտեմբերի 30-ին ԱՅ Աժ-ում գումարված արտահերթ նիստում.

«Անկախ եւ ինքնիշխան Արցախի Հանրապետությունը կայացած իրողություն է, որի հիմքում Արցախի ժողովրդի ինքնորոշման իրավունքի իրացման փաստն է: Արցախի ժողովուրդն ինքնորոշվել է 1991թ. սեպտեմբերի 2-ին՝ հռչակելով հանրապետություն, իսկ դեկտեմբերի 10-ին՝ անցկացնելով անկախության մասին հանրաքվե: Ինքնորոշման իրավունքն իրացրել է միջազգային իրավունքի հանրաճանաչ նորմերի ու սկզբունքների, ինչպես նաեւ այն ժամանակ գործող ԽՍՀՄ օրենսդրության համապատասխանությամբ:



Ուստի, իր բնակչությանը ցեղասպանությունից, պատերազմի հանցագործություններից, էթնիկ գտումներից եւ մարդկության դեմ հանցագործություններից պաշտպանելու միջազգայնորեն երաշխավորված իրավունքն ու պարտականությունը ժողովրդավարական ընթացակարգերով ընտրված Արցախի իշխանություններին է: Իսկ միջազգային հանրությունն իր հերթին պետք է խրախուսի եւ օգնի Արցախին՝ իրացնելու իր այս պարտականությունը: Չնայած Լեռնային Ղարաբաղի ժողովուրդն իր կեցության սոցիալ-տնտեսական, բարոյահոգեբանական բաղադրիչի անվտանգությունը շարժապարհ է Հայաստան-Արցախ-Սփյուռք համակարգին, այնուամենայնիվ, ռազմաքաղաքական կայունության հեռանկարն օբյեկտիվորեն դիտարկում է առավելապես Ռուսաստանի Հանրապետության հովանու ներքո: Այսինքն, մի կողմից առկա է ընդգծված ռուսամետ տրամադրություններով հասարակության բացարձակ մեծամասնությունն ու իշխանությունն, մյուս կողմից՝ Ռուսաստանի Հանրապետության՝ Լեռնային Ղա-

րաբաղի նկատմամբ սկզբունքային դիրքորոշման ընդգծված զգուշավորություն: Հայաստան-Ադրբեջան խաղաղության պայմանագրի ելակետով Հարավկովկասյան տարածաշրջանի նոր անվտանգային ճարտարապետության ու գլխավոր դերակատարների վերադիրքավորումները վկայում են, որ զարգացումների նմանօրինակ բովանդակությունն ու տեմպը կարող են հանգեցնել Հարավային Կովկասում ռուսական ազդեցության չեզոքացման, ինչը մեզ ձեռնտու չէ: Արդյունքում, Ռուսաստանն ու Լեռնային Ղարաբաղը տարածաշրջանում փոխադարձաբար կարող են կորցնել վերջին գոյաբանական հենակետը: Այս համատեքստով պայմանավորված՝ ԽՍՀՄ-ի իրավահարգողության եւ պատմական արդարության վերականգնման քաղաքական պատասխանատվության փաստով Ռուսաստանի Հանրապետության հետ ուղիղ երկխոսությամբ կարելի է եւ պետք է սահմանել հնարավոր գործակցության հստակ ուղեցույցներ: Նկատելի սակայն, որ նախքան դեպի Հյուսիս, Հարավ, Արեւմուտք կամ Արեւելք ճախրելը՝ մենք պարտավոր ենք սթափ կշռադատել Արցախի, Հայաստանի եւ Սփյուռքի անվտանգային շահերը, ոչ թե դրանք ի սպաս դնել մեր իսկ սեփական շահերը շրջանցող երկրներին եւ հոսանքներին: Մասնավորապես, հայ ժողովրդի համար այս ճակատագրական փուլում Հայաստանի Հանրապետության ներկայիս իշխանությունների հետ ունեցած անբնական հարաբերությունների պատճառաբանությամբ մայր Հայաստանին թիրախավորելու, նրան հյուսիսային կամ արեւմտյան խաչմերուկներում օտար շահերին ստորադասելու, Արցախը հակահայաստանյան օջախ դարձնելու փորձերը միանգամայն մերժելի են: Այս հպանցիկ դիտարկումների համատեքստում «Միասնական հայրենիք» խմբակցությունն առաջարկում է մշակել երկարաժամկետ հայեցակետային մոտեցումներ՝ սահմանելով ազգային մարտահրավերներն ու սպառնալիքները, խնդիրներն ու նպատակները, դրանց իրագործման հնարավոր ճանապարհները:

Հարգարժան գործընկերներ, սիրելի՛ հայրենակիցներ, Արցախի գոյության փաստացի երաշխիքը Արցախում ապրող հայն է, Արցախի ինքնության բացարձակ երաշխավորը մայր Հայաստանն է: Արցախի անվտանգության շրջափելի երաշխիքը Ռուսաստանի Հանրապետության խաղաղապահ ուժերի ներկայությունն է»:

Խնդիրը լուծված չէ, քանի դեռ որոշված չէ Արցախի վերջնական կարգավիճակը. Գեղամ Ստեփանյան



ԱՅ Աժ պատգամավոր Գեղամ Ստեփանյանի ելույթը՝ հոկտեմբերի 30-ին ԱՅ Աժ-ում գումարված արտահերթ նիստում.

«Արդեն երկու տարի է, ինչ Արցախի Զանրապետության ժողովուրդն ապրում ու արարում է ոչ սովորական պայմաններում՝ անորոշություն, Արդեթանի կողմից պատերազմի վերսկսման սպառնալիքներ, հոգեբանական ճնշումներ, ենթակառուցվածքների պարբերական խաթարումներ եւ նման տասնյակ խնդիրներ:

Երկու տարի է՝ Արցախի ժողովուրդը տագնապի գանգ է հնչեցնում միջազգային հանրությանը եւ բոլոր շահագրգիռ կառույցներին՝ փորձելով նրանց հասցնել այն ակնհայտ ճշմարտությունը, որ Արդեթանը շարունակում է ագրեսիվ գործողությունները՝ բազմիցս խախտելով կրակի դադարեցման եւ բոլոր ռազմական գործողություններին վերջ տալու եռակողմ հայտարարության ելակետային դրույթը, ոտնահարելով ուժի կամ ու-

ժի սպառնալիքի կիրառման անթույլատրելիության միջազգային սկզբունքը:

Այս ամենով Արդեթանը մեծապես վնասում է նաեւ 2020թ. Նոյեմբերի 9-ի հայտարարությամբ Արցախում տեղակայված խաղաղապահ առաքելությանը՝ կասկածի տակ դնելով Ռուսաստանի Դաշնության ռազմաքաղաքական դեկլարացիայի ջանքերի արդյունավետությունը:

Երկու տարի է, ինչ Արդեթանը բոլոր միջազգային առյուծներում համառորեն ձգտում է տպավորություն ստեղծել, թե ադրբեջանա-դարաբաղյան հակամարտությունը լուծված է:

Ստիպված ենք ցածր գնահատել, որ միջազգային որոշ կառույցներում եւ որոշ ազդեցիկ երկրներում Արդեթանի մատուցած, այսպես ասած, փաստարկները ոչ միայն արժանանում են ուշադրության, այլև փորձ է արվում ժողովրդի ինքնորոշման իրավունքը ստորադասել աշխարհաքաղաքական հետաքրքրություններին, որոշ դեպքերում էլ՝ ադրբեջանական նավթին եւ գազին:

Որեւէ հակամարտության լուծում չի կարող միակողմանի գիշումների հաշվին լինել: Մենք չենք համարում, որ խնդիրը լուծված չէ, քանի դեռ որոշված չէ Արցախի վերջնական կարգավիճակը, քանի վերականգնված չեն Արդեթանի կողմից բռնազավթված տարածքներից բռնի տեղահանված քաղաքացիների խախտված իրավունքները, քանի դեռ բռնազավթված տարածքներում հետեւողականորեն ոչնչացվում են հայկական մշակութային ու հոգեւոր ժառանգությունը:

Վերջապես, հակամարտությունը չի կարող լուծված համարվել, քանի դեռ միջազգայնորեն ամրագրված չեն Արցախի ժողովրդի՝ սեփական ճակատագիրը ինքնուրույն որոշելու արդեն իսկ իրաց-

ված իրավունքը եւ լիարժեք պաշտպանված չէ մեր ժողովրդի անվտանգությունը:

Ինչպես նախկինում, այնպես էլ 2020թ. հետո Արցախի Զանրապետության հանրային ու պետական կառույցները անհատական ու հավաքական կարծիքների միջոցով մշտապես հայտարարել են այն բացահայտ ճշմարտության մասին, որ հայկական Արցախը երբեք Արդեթանի կազմում չի կարող լինել ու չի լինելու, քանի որ Արցախը Արդեթանի կազմում՝ նշանակելու է տարածք առանց իր բնիկ հայ բնակչության, ու այսօր մեր ուղերձն աշխարհին այն է, որ արցախցի տերն է իր հայրենիքին, իր հայրենի հողում խաղաղ ու անվտանգ ապրելու իրավունքին եւ շարունակելու է իր գոյության պայքարը իրավունքի ճանաչման ու միջազգային հանրության լիիրավ անդամ դառնալու համար:

Այս հարցում Արցախի ժողովուրդն ունի ինչպես մայր հայրենիքի ու աշխարհասփյուռ հայության, այնպես էլ իր անվտանգությունն այսօրվա դրությամբ ապահովող ռուսական խաղաղապահ առաքելության, միջազգային կազմակերպությունների, տարածաշրջանի կալուստային հետաքրքրված ուժային կենտրոնների՝ Մոսկվայի, Վաշինգտոնի, Փարիզի, Բրյուսելի աջակցության կարիքը:

Մարդու իրավունքներն իրենց համար գերակայություն հռչակած երկրները իրավունք չունեն աչք փակելու Արցախում նոր ցեղասպանության նախապատրաստության փաստի վրա: Դա պարզապես զավեշտ է 21-րդ դարի աշխարհակարգի համար:

Այս համատեքստում կարելի է համարում շեշտել, որ Արցախի հայաթափման ծրագիրն այսօր խոչընդոտող գլխավոր գործոնը ռուսական խաղաղա-

պահների ներկայությունն է:

Քննադատելով ռուսական խաղաղապահների դերակատարությունը՝ տեղին էմ համարում Ռուսաստանի Դաշնության իշխանություններին դիմել Արցախի ժողովրդի անվտանգությունն ապահովելու գործը շարունակելու խնդրանքով:

Չարգելի գործընկերներ, իհարկե, խաղաղությունը ցանկալի նպատակ է բոլոր ժողովուրդների համար: Խաղաղության մասին տարածաշրջանում հենց Արցախի ժողովուրդն է բոլորից շատ երագում, սակայն խաղաղության գինը չի կարող լինել Արցախի ժողովրդի հայրենակրկությունն ու հայկական Արցախի ոչնչացումը:

Մենք խորապես գիտակցում ենք անվտանգության այն մարտահրավերներն ու սպառնալիքները, որոնց այսօր բախվում է Զայաստանի Զանրապետությունը:

Արցախի հանդեպ մայր հայրենիքի հոգատար վերաբերմունքը մենք զգացել ենք մշտապես: Վերջին երեք տասնամյակում մեր հազարավոր հայրենակիցներ իրենց կյանքն են գոհաբերել հայրենիքի այս հատվածում հայկականության պահպանման համար, եւ այսօր նաեւ մեր սուրբ նահատակների պատգամն իրագործելու համար պետք է շարունակենք պայքարը՝ սթափ, կշռադատված լուծումներ ապահովելով ինչպես Զայաստանի Զանրապետությունում, այնպես էլ Արցախի Զանրապետությունում:

Այդ ամենը չի կարող կատարվել մեկը մյուսի հաշվին, քանի որ առանց Արցախի չկա Զայաստան, առանց Զայաստանի չկա Արցախ:

Մեր՝ Արցախի ժողովրդավարական կուսակցություն խմբակցությունը կոչ է անում քվեարկել Ազգային ժողովի նախագծի օգտին»:

Արկածախնդրությունը կկործանի թե՛ Արցախը, թե՛ Զայաստանը. Մետաքսե Զակոբյան

ԱՅ Աժ պատգամավոր Մետաքսե Զակոբյանի ելույթը՝ հոկտեմբերի 30-ին կայացած ԱՅ Աժ արտահերթ նիստին.

«Չասել ենք սահմանագծին, որից անդին մեր քաջորդիների արյամբ գծված հայրենիքի կորուստն է, եւ այն չկորցնելու համար պիտի հետ նայենք եւ հիշենք: Ինչու էլ հիշեցնում ենք, որ 1991թ. սեպտեմբերի 2-ին ԼՂՀ հռչակումից ընդամենը մի քանի ամիս առաջ, 1991թ. գարնանը Արդեթանի իրականացրեց ռազմական գործողություններ՝ գրավելով եւ իրենց տներից արտաքսելով հայկական բնակավայրերի տասնյակ հազարավոր բնակիչներին, ինչի հետեւանքով կրկին ցեղասպանվելու վտանգի առջեւ էին: Արցախում եւ Զայաստանում տիրում էր հիասթափություն, տագնապի եւ անորոշության մթնոլորտ: 1991թ. սեպտեմբերի 2-ին Ստեփանակերտում տեղի ունեցավ Լեռնային Ղարաբաղի ինքնավար մարզի մարզպետի եւ Շահումյանի շրջանային խորհուրդների համատեղ նստաշրջանը: Ընդունվեց հռչակագիր Լեռնային Ղարաբաղի ինքնավար մարզի եւ Շահումյանի շրջանի սահմաններում Լեռնային Ղարաբաղի Զանրապետություն հռչակելու մասին՝ հիմք ընդունելով 1990թ. ապրիլի 3-ի Խորհրդային Միության Գերագույն խորհրդի՝ Խորհրդային Միության կազմից միութենական հանրապետությունների դուրս գալու կարգի մասին օրենքը: Ամիսներ անց՝ 1991թ. դեկտեմբերի 10-ին, Արցախում տեղի ունեցավ անկախության հանրաքվե: Զանրաքվե, որն Արցախի բնակիչներն իրականացրին արկերի պայթյունների եւ հրետակոծության ներքո՝ ունենալով նաեւ զոհեր խաղաղ բնակչության մեջ, սակայն լիահույս, որ կերտում են անկախ հայրենիք: Եվ ստացվեց:

Արցախի Զանրապետությունն այսօր, առավել քան երբեք, կանգնած է գոյություն ունենալու-չունենալու խնդրի առաջ: Աշխարհաքաղաքական եւ տարածաշրջանային վերջին զարգացումները նոր մարտահրավերներ են առաջ բերում Արցախի Զանրապետության համար: Ստեղծված իրավիճակում Արդեթանը շարունակում է ուժի սպառնալիքի կիրառումը, ագրեսիվ ու հակահայկական հայտարարությունները՝ միաժամանակ պնդելով, որ Արցախի հարց պարզապես չկա, ինչը բացարձակ անընդունելի մոտեցում է: Այն Արցախի Զանրապետության ուղիղ ոչնչացումն է, հայի նոր ցեղասպանությունը: Բաքվի նման քաղաքականությունն արդյունք է մի կողմից Զայաստանից անկախվող հստակ հակազդեցություն բացակայության, մյուս կողմից՝ միջազգային հանրության լռության, բացառությամբ՝ որոշ դեպքերի: Սրան, անշուշտ, գումարվում է նաեւ այն ան-

պատժելիության մթնոլորտը, որ ձեւավորվել է 2020թ. Արցախի նկատմամբ պատերազմ սանձազերծելու, ահաբեկիչներ ներգրավելու ու պատերազմական հանցագործությունների համար միջազգային պատշաճ արձագանք չստանալու հետեւանքով: Այսօր առավել քան մտահոգիչ է նաեւ Արցախի ապագայի, Արցախյան հիմնահարցի վերաբերյալ միջազգային հանրության եւ, առաջին հերթին, հավաքական արեւմուտքի դիրքորոշումը: Վերջին գարգացումների, հանդիպումների ու հայտարարությունների հետեւանքով այլեւս միանշանակ է Արցախի Արդեթանի կազմում տեսնելու՝ Արեւմուտքի մոտեցումը: Այս մասին խոսեց նաեւ ԱՄՆ կոնգրեսականը Զայաստանի հանրային հեռուստաընկերության ուղիղ եթերում, որտեղ բացահայտեց հավա-



քական Արեւմուտքի նախագիծը՝ դա համեմտելով մշակույթն ու մարդկանց պահպանելու հեղեղ ու շեղող թեգերով: Կստահ եմ, չէք մոռացել, որ ԶԶ ներկայիս իշխանություններին այդ նույն հավաքական Արեւմուտքը, կամ ըստ Փաշինյանի՝ միջազգային հանրությունը, հորդորում, ստիպում էր Արցախի հարցում նշանոց իջեցնել, ամեն կերպ խեղաթյուրում եւ փորձում է արժեզրկել մեր ինքնորոշման միջազգային իրավունքը, որն էլ իր ճնշող միջնորդությամբ արդեն, այսպես կոչված՝ խաղաղության պայմանագիրն է պատրաստել, որտեղ առ ոչինչ է միջազգային բոլոր նորմերին համապատասխան Արցախի ինքնորոշման իրավունքը, եւ փաստացի այդ տարբերակը Արցախի Զանրապետության ոչնչացումն է: Մյուս կողմում ՌԴ-ն է: Այս դեպքում եւս

հիշում ենք, որ հենց Ռուսաստանի Դաշնության գործուն քայլերի արդյունքում կանգնեցվեց պատերազմը, եւ արդեն երկու տարի է, որ 120.000 արցախցի ապրում է Արցախի փոքրիկ պատահիկի վրա եւ շարունակում պայքարել իր իսկ պատմական հայրենիքում խաղաղ եւ արժանապատիվ ապրելու իրավունքը վերահաստատելու համար: Արցախում այլ կերպ ապրելու եւ մտածելու իրավունք չունենք, քանզի Արցախի ժողովրդի գենետիկ հիշողությունը եւ, առավել եւս, այսօրվա իրականությունն անկասկածաբար խոսում են այնպիսի անկասկածաբար խոսելու հետ պատմական կապերը վերահաստատելու եւ վերափոխվելու պարզ կենսաբանական անհրաժեշտության մասին: Այն, որ ռուս խաղաղապահի առաքելությունն անկասկածաբար է, գիտի եւ տեսնում է մեզանից յուրաքանչյուրը: Այն, որ միայն կոչեր հնչեցնելով եւ սաստելով՝ հնարավոր չէ մեզ բաժին հասած թշնամուն կանգնեցնել, դա եւս գիտակցում ենք: Չետեաբար, Զայաստանի եւ Արցախի իրական դաշնակիցը ՌԴ-ն է, որն առաջարկում է հակամարտության կարգավորման իր տարբերակը, որն այս իրավիճակում կարող է հնարավորություններ ստեղծել Արցախի հարցի հետագա հայանպաստ լուծումներն ունենալու համար:

Դիմում եմ ոչ միայն այս դահլիճում նստած գործընկերներին, այլ նաեւ հազարավոր արցախցիներին, ովքեր հենց հիմա Ստեփանակերտի Վերածննդի հրապարակում են եւ սպասում են մեր դիրքորոշմանն ու հետագա քայլերին:

Չարյենակիցներ, մենք սխալվելու իրավունք չունենք. արկածախնդրությունը կկործանի թե՛ Արցախը, թե՛ Զայաստանը, թե՛ մեր բոլորի երագանք հայրենիքը: Մենք պիտի պարզ եւ հստակ ուղղենք մեր վեկտորը, իսկ այն միայն մեկ ուղղություն ունի: Ուստի բանակցողներից, որոշում կայացնողներից պահանջում ենք մերժել եւ հրաժարվել վավերացնել ցանկացած փաստաթուղթ, որտեղ կստորագրվի Արցախի ինքնորոշման իրավունքը եւ փորձ կարվի Արցախը բռնակցել Արդեթանին: Եթե բանակցել, ապա միայն մի հիմքով՝ Արցախը եղել է, կա ու լինելու է հայկական եւ ոչ մի պայմանով չի կարող լինել Արդեթանի կազմում: Կոչ ենք անում Արցախում, Զայաստանում եւ Սփյուռքում ապրող մեր ազգակիցներին եւ մեր բոլոր բարեկամներին՝ համախմբվել հանուն Արցախի՝ հստակ գիտակցումով, որ այսօր վտանգված է Արցախի լինելիությունը:

Ուզում եմ վերահաստատել ամիսներ առաջ ասածս. ով հավատում, մտածում կամ բարձրաձայնում է, որ Արցախը Արդեթանի կազմում ապագա ունի, նա պետական հանցագործ է»:

Մեզ համար անընդունելի է ցանկացած փաստաթուղթ, որտեղ Արցախը կդիտարկվի որպես Ադրբեջանի մաս. Դ. Բաբայան

Ստեփանակերտում հոկտեմբերի 30-ին տեղի է ունեցել բազմամարդ հանրահավաք, որտեղ ելույթ է ունեցել նաև ԱԶ ԱԳ նախարար Դավիթ Բաբայանը: Իր ելույթում նա մասնավորապես նշել է.

«Միայն այն փաստը, որ այսօր բոլորը կանգնած եք այստեղ, որ տասնյակ հազարավոր արցախցիներ այստեղ են, արդեն պատգամ է մարդկությանը, միջազգային հանրությանը, տարբեր երկրներին:

Իսկապես, մենք ապրում ենք օրհասական ժամանակներ: Մենք առերեսվում ենք գոյաբանական վտանգների: Ավելին, ոչ միայն Արցախը, այլև մայր Հայաստանը եւ Սփյուռքն են առերես-

ված իրավիճակից պատվով դուրս գանք. իհարկե, պետք է աշխատենք է՛լ ներքին, է՛լ արտաքին ոլորտներում:

Ներքին ոլորտներում, ամենակարեւորը, պետք է չլինենք անտարբեր, հենց անտարբերությունը կարող է մեզ կործանել: Կարծես թե՛ ամենամեծ արարքն է:

Դե ի՞նչ է կախված ինձանից: Ոչ մի բան կախված չէ մեկ մարդուց: Այդպես են մտածում ոմանք: Ո՛չ, յուրաքանչյուրիցդ է կախված մեր ապագան, յուրաքանչյուրիցդ է կախված՝ հաղթանակը է լինելու, թե՛ պարտություն:

Ինչ վերաբերում է արտաքին ոլորտին, իհարկե, մեծ աշխատանք է արվում համայն հայության հետ մեկտեղ:

Պետք է լինենք սկզբունքային, պետք է տեղ տանք արհեստավարժությանը եւ հայրենասիրությանը:

Մեզ համար անընդունելի է ցանկացած առաջարկ, ցանկացած փաստաթուղթ, որտեղ Արցախը կդիտարկվի որպես Ադրբեջանի մաս: Մենք մերժելու ենք ցանկացած նման առաջարկ եւ, եթե այդպիսի առաջարկ տարբեր երկրներից, տարբեր միջազգային ատյաններից մեզ ներկայացնեն, մենք դա դիտարկելու ենք որպես միջազգային իրավունքի կոպտագույն խախտում:

Յուրաքանչյուրը պետք է անհատապես պատասխանատու լինի իր խոսքի համար: Մենք մերժելու ենք ցանկացած նման առաջարկ եւ, եթե այդպիսի առաջարկ տարբեր երկրներից, տարբեր միջազգային ատյաններից մեզ ներկայացնեն, մենք դա դիտարկելու ենք որպես միջազգային իրավունքի կոպտագույն խախտում:

Յուրաքանչյուրը պետք է անհատապես պատասխանատու լինի իր խոսքի համար: Մենք մերժելու ենք ցանկացած նման առաջարկ եւ, եթե այդպիսի առաջարկ տարբեր երկրներից, տարբեր միջազգային ատյաններից մեզ ներկայացնեն, մենք դա դիտարկելու ենք որպես միջազգային իրավունքի կոպտագույն խախտում:

պաշտպանելու Արցախը, հավատացե՛ք, որ կա այդ ներուժը. այդ ներուժը ձեզանից յուրաքանչյուրի մեջ է: Մի՛ վատացե՛ք, եթե ասեն, որ մենք ի վիճակի չենք պաշտպանելու:

Միքելի՛ ժողովուրդ, յուրաքանչյուրս հիմա ունի ընտրության իրավունք. կա՛մ մենք պետք է պատմության մեջ մտնենք որպես ամենամեծ արժանապատիվ, ամենաանհայրենիք սերունդ, որի ժամանակ կործանվեց բիբլիական Արցախը, կա՛մ մենք պետք է պատմության մեջ մտնենք որպես սկզբունքային, հայրենասեր, իր պատմությունը հարգող սերունդ, որը, անկախ բոլոր դժվարություններից, կարողացավ փրկել այս աստվածային հողակտորը:

Ես ավելի քան համոզված եմ, որ մենք կարողանալու ենք դա անել, համոզված եմ, որովհետեւ մենք ունենք Եւրոպայի, համոզված եմ, որովհետեւ մենք ունենք Ծիեռնակաբերդ, համոզված եմ, որովհետեւ ունենք Շուշի, որը նայում է մեզ:

Ի վերջո, ո՞նց ենք մենք վաղը նայելու մեր մանուկներին, մեր մեծերին, սպացող մեր կանանց եւ մայրերին, ո՞նց ենք կանգնելու մեր հերոսների հիշատակի առջեւ, ի՞նչ պատասխան ենք տալու Աստծո առջեւ: Հետեւաբար, պետք է բոլորս իմանանք, որ մեր ճակատագիրը միասնական է. չի՛ լինելու ոչ մի խաղ ժո-

ղովորդի մեջքի ետեւում, բոլորս միասնական պահելու եւ պաշտպանելու ենք Արցախը՝ անկախ բոլոր դժվարություններից. կա Արցախը փրկելու շանս:



Վրացական զորքերի դեմ հայտարարված հանրահավաքի ժամանակ Ստեփանակերտում հավաքված մարտիկները:

ղովորդի մեջքի ետեւում, բոլորս միասնական պահելու եւ պաշտպանելու ենք Արցախը՝ անկախ բոլոր դժվարություններից. կա Արցախը փրկելու շանս:

Մենք բարձր ենք գնահատում ՌԴ դերակատարությունը տարածաշրջանում եւ խաղաղապահ առաքելության այն բարձր գործը, որն իրականացվում է ամենօրյա կտրվածքով:

Պետք է մի կողմ թողնել ընթացիկ անձնական կամ քաղաքական ամբիցիաները եւ հասկանալ, որ հայրենիքի շահն է կարեւոր. Զ. Սախյան

Ստեփանակերտի Վերածննդի հրապարակում Արցախի երիտասարդների կողմ ներկայացրել է Ստեփանակերտի Մեսրոպ Մաշտոց համալսարանի ուսիտր-հուրդի նախագահ Զորա Սախյանը.

«Ես Արցախի անկախության սերնդից եմ: Ու իմ ծնողներից եմ լսել խորհրդային ժամանակաշրջանի մասին: Գիտեմ, որ Արցախը խորհրդային Ադրբեջանի կազմում իբրեւ թե ունեցել է ինքնավարության կարգավիճակ, բայց մշտապես ենթարկվել է բռնաճնշումների ու խտրական վերաբերմունքի: Հենց դա էլ ստի-



պել է ոտքի կանգնել ու պայքարել մեր իրավունքի համար: Մեր ծնողները պայքարել են ու հաղթել: Եվ ես ու իմ սերնդակիցները, ինչպես ասացի, ապրել ու մեծացել ենք անկախ Արցախում: Ինքնուրույն ու հայկական Արցախի գոյությունը Ադրբեջանի համար անընդունելի է, դրա համար նա միշտ դիմում է ահաբեկչական մեթոդների, որոնց նպատակը մեկն է՝ հայաթափում, բայց, եթե ուզում ենք անկախ հայրենիք ունենալ, պիտի պայքարենք միշտ:

2020թ. դաժան պատերազմը շատ բան է փոխել մեր մտքում, ապրելակերպում, բայց Արցախում ապրելու մտադրությունը, նպատակն ու ծրագրերը մնացել են անփոփոխ, դեռ ավելին՝ ամրապնդվել են: Սակայն պատերազմից հետո ծավալվող քաղաքական իրադարձությունները ցույց են տալիս, որ առերեսվում ենք լուրջ վտանգների: Բոլորիս համար պարզ է, որ թշնամու ախորժակը Արցախում չի սահմանափակվելու: Մենք տեսնում ենք, որ թուրք-արդբեջանական տանդեմի նպատակներն ավելի ընդարձակ են: Արցախը զավթելուց հետո հերթը հասնելու է Սյունիքին, այնուհետեւ՝ Արարատյան դաշտին, Գեղարքունիքին, Ծիրակին, եւ այդպես շարունակ՝ մինչեւ հայկական պետականության վերջնական կործանում: Հայ ժողովրդի տասնյակ հազարավոր զավակներ 1988, 1991, 1994 թվականներին, 2016 թվականի քառօրյային, 2020 թվականի 44-օրյային Հայաստանի Հանրապետությունից, հայկական Սփյուռքից իրենց արյունն ու քրտինքն են շողախել Արցախի հողին՝ գիտակցելով, որ Արցախը հայկական եղել է եւ լինելու է:

Եվ մենք իրավունք չունենք այդ բոլոր տառապանքներն ու գրկանքները, նվիրումը մոռանալ եւ ուրանալ. դա կլինի ամենամեծ դավաճանությունը ինքներս մեր նկատմամբ: Մեզ համար անընդունելի է ցանկացած խաղաղության պայմանագիր, որը կանաճի տակ կդնի մեր ինքնիշխանությունը, մեր, ձեր, բոլորի, յուրաքանչյուրի՝ սեփական ճակատագիրը տնօրինելու եւ պապենական հողում արժանապատիվ ապրելու իրավունքը, անընդունելի է իմ՝ անկախության սերնդի ներկայացուցչի, անկախության համար պայքարած սերնդի, անկախությունը երազած սերնդի համար: Ես համոզված եմ, որ այս օրհասական պահին նույն համազգային համախմբումն է անհրաժեշտ՝ ի պաշտպանություն Արցախի ու արցախահայության:

Միքելի՛ արցախցիներ, մենք՝ արցախցի երիտասարդներս, մեր ապրելակերպում ու սկզբունքներում երբեք թույլ չպիտի տանք, որ հայակործան որեւէ ծրա-



գիր իրականանա: Արդեն ասացի, որ մեր՝ հայրենիքում ապրելու եւ ստեղծելու իրավունքը պահելու համար գոյամարտ է մղվել: Թե՛ ինձանից ավագ, թե՛ իմ սերնդակից բազմահազար հայորդիներ հանուն հայրենիքի գոհաբերել են ամենաթանկը՝ իրենց կյանքը:

Կարծում եմ, որ հանուն Արցախի, հանուն հայրենիքի պետք է մի կողմ թողնել ընթացիկ անձնական եւ քաղաքական ամբիցիաները եւ հասկանալ, որ հայրենիքի շահն է կարեւոր: Եթե չունես հայրենիք, ի՞նչ հասարակական կամ քաղաքական գործունեության մասին է խոսքը, որտե՞ղ է դա գործելու, ինչի՞ համար եւ ինչպե՞ս: Ծակատագիրը մեզ չի տալիս հանգիստ ապրելու հնարավորություն, եւ այն, ինչ ուրիշ երկրների բնակիչները ստանում են ի ծնե՝ որպես բնական իրավունք, մենք դա էլ ենք նվաճում պայքարելով, իսկ պայքարը հաջողությամբ ավարտելու համար պետք է համախմբում: Ուստի, որպես արցախցի երիտասարդ, կոչ եմ անում լինել միաբան ու մեր ամբողջ ներուժը ներդրել հայրենիք պահելու, մեր՝ արցախցի լինելու իրավունքը պաշտպանելու համար»:

Արցախում պայքարի ոգին չի մարել

Արցախում ու Արցախի շուրջ տեղի ունեցող վերջին քաղաքական զարգացումների վերաբերյալ «Ապառաժ»-ը գրուցել է ՀՀ-ի Բյուրոյի անդամ, Արցախի Հանրապետության Ազգային ժողովի ՀՀ-ի խմբակցության պատգամավոր Դավիթ Իշխանյանի հետ.

- Վերջերս ՀՀ մեկնեց ԱՀ նախագահի գլխավորած պատվիրակությունը և հանդիպումներ ունեցավ ՀՀ իշխանությունների ներկայացուցիչների հետ: Ըստ մեր տեղեկությունների՝ Դուք եւս մասնակից եք եղել այս նախաձեռնության իրականացմանը: Արդյո՞ք արդյունավետ եք համարում տեղի ունեցած հանդիպումները և ձեռք բերված պայմանավորվածությունները:

- Նախ՝ ուզում եմ արձանագրել, որ հետպատերազմյան շրջանում ՀՀ եւ ԱՀ քաղաքական իշխանությունների մակարդակով, կարելի է ասել, սա առաջին պաշտոնական թիմային հանդիպումն էր: Մենք, իհարկե, հետպատերազմյան շրջանում տարբեր հանդիպումների ենք ականատես եղել, բայց հիմնական հանդիպումները եւ քննարկումները տեղի էին ունենում ՀՀ վարչապետի եւ ԱՀ նախագահի մակարդակով: Մենք տարբեր ամբիոններից հնչեցրել ենք, որ Հայաստանի եւ Արցախի միջեւ քաղաքական թեւերը կտրվել են, եւ այստեղ մեղքի հիմնական բաժինը տեսնում ենք ՀՀ իշխանությունների մոտ: Արդե՛ք չանի կողմից վարվող քաղաքականության հետեւանքով ուղղակի եւ անուղղակի ճնշումներ են գործադրվում ՀՀ-ի վրա, եւ ՀՀ իշխանությունները ոչ միայն իրենց այցելություններն են սահմանափակել դեպի Արցախ, այլ նաեւ՝ համատեղ համապատասխան քննարկումները: Մինչեւ 2018 թվականը համահայկական կարելու օրակարգային հարցերի շուրջ համատեղ քննարկումները եւ որոշումների կայացումը դարձել էր քաղաքական ավանդույթ:

Պետք է արձանագրել, որ շատ կարելու էր այս պատվիրակության այցը, եւ եթե դիտարկենք այդ տեսանկյունից, այն ողջունելի է, բայց կա նաեւ նախապատմություն: Այս տարվա ապրիլի 14-ին, հաշվի առնելով ստեղծված իրավիճակը, ԱՀ Ազգային ժողովը հանդես եկավ հայտարարությամբ: Այդ օրերից մենք անընդհատ պահանջում էինք նախագահ Արայիկ Հարությունյանից, որ պետք է հստակ ճշգրտել ՀՀ իշխանությունների տեսակետներն ու դիրքորոշումները: մեզ չէր բավարարում ՀՀ վարչապետ-ԱՀ նախագահ մակարդակի երկխոսությունը, երբեմն նաեւ՝ ԱՀ նախագահի՝ ՀՀ Անվտանգության խորհրդի նիստերին մասնակցությունը, տարբեր առիթներով ՀՀ Արտաքին գործերի նախարարի, անվտանգության խորհրդի քարտուղարի, Ազգային ժողովի նախագահի մակարդակով հնչեցրած տեսակետները, որովհետեւ անհրաժեշտ էր դեմ առ դեմ ճշգրտել եւ ունենալ հստակություն: Եվ մենք ակնկալում էինք փակ հանդիպում երկու քաղաքական սուբյեկտների՝ ԱՀ եւ ՀՀ քաղաքական պատասխանատուների միջեւ:

Այո՛, մամուլում հնչում են տեսակետներ, որ Ստեփանակերտի Վերածննդի իրապարակում հավաքի ճնշումների տակ է մեկնել նշված պատվիրակությունը: Թող այդպես էլ հնչի, մենք դեմ չենք: Այո՛, Արցախում կա ձեւավորված բացասական վերաբերմունք եւ մթնոլորտ ՀՀ իշխանությունների նկատմամբ:

- Թե՛ ԱՀ նախագահի, թե՛ ՀՀ պաշտոնյաների կողմից նշվում է, որ ՀՀ-ԱՀ երկկողմ հարաբերությունները մշտական բնույթ ունեն, եւ ԱՀ իշխանությունները տեղի չեն Արցախի հարցով ընթացող բանակցություններին: Սակայն մամուլի հրապարակումներում այլ պատկեր է ի հայտ գալիս: Ի՞նչ տեսակետ ունեք այս հարցի վերաբերյալ:

- Գաղնիք չէ, որ Հայաստանի իշխանությունները ճարակորեն օգտագործում են Արցախի նախագահի եւ իշխանության տարբեր օղակների հետ իրենց շփումները, մասնավորապես՝ ՀՀ վարչապետ-ԱՀ նախագահի հարաբերությունների կոնտեքստում փորձում են տարբեր առիթներով ներկայացնել, թե մեր տեսակետները համահունչ են, որ բանակցային գործընթացի հետ կապված բոլոր մանրամասները փոխանցվում են ԱՀ իշխանություններին, մասնավորապես՝ նախագահին,

իսկ նա էլ իր հերթին՝ խորհրդարանում եւ դրանից դուրս գործող քաղաքական ուժերին: Մենք Արցախի նախագահին ներկայացրել ենք, որ չենք վստահում ՀՀ իշխանություններին, բավարար հիմքեր ունենք մտածելու, որ ՀՀ իշխանությունները ոչ բոլոր մանրամասներն են փոխանցում Արցախի նախագահին: Այդ կիսատ-պատ փոխանցված տեղեկատվությունը, երբեմն նաեւ քաղաքական մոլորեցնող տեսակետները Արցախի իշխանություններն ընդունում են որպես հիմք եւ ըստ այդմ էլ կառուցում իրենց քաղաքականությունը, որի հետեւանքները բավականին ծանր են:

Այդ ամենի հետեւանքներից մեկը ժողովրդի մեջ անորոշության արմատավորումն է, ապագայի նկատմամբ անվստահությունը, որը պատճառ է դառնում արտագաղթի, ներքին դժգոհությունների: Եթե նույնիսկ այդ ամենն ուղղակիորեն չի արտացոլվում, մենք տեսնում ենք, թե ինչպիսի բարոյափոփոխական մթնոլորտ է տիրում բնակչության շրջանում: Դրանք արդ-



յունք են սոցիալական մեղիայի, տարբեր տեխնոլոգիաների ազդեցության, որոնք հատուկ նպատակ ունեն թուլացնելու, պառակտելու Արցախը, տարբեր ձեւերով հայաթափելու Արցախը:

Մինչեւ հիմա ներկայացվում էր, որ մեր քայլերը համահունչ են, եւ չկա տեսակետների տարբերություն, ուստի համոզված եմ, որ եթե նախագահին իր ելույթներով ու կեցվածքով չբարձրաձայնի այս ամենի մասին, ՀՀ իշխանությունները շատ ճարակորեն դա կօգտագործեն եւ կասեն՝ ամեն ինչի մասին մենք խոսել ենք՝ պատասխանատվությունը թողնելով Արցախյան կողմի վրա:

- Վերջերս շատ է խոսվում խաղաղության մասին, այսպես կոչված՝ խաղաղության պայմանագրի բանակցություններ են ընթանում: Այս քննարկումները նորություն են:

- Երբ առաջին անգամ խոսվեց խաղաղության օրակարգի եւ պայմանագրի մասին, ՀՀ-ի խմբակցությունն Արցախի ԱԺ ամբիոնից, ՀՀ Գերագույն մարմնի ընկերները, «Դիմադրություն» շարժման ներկայացուցիչները հանրային բեմից, փողոցային պայքարի ընթացքում հանրահավաքների ամբիոններից անընդհատ խոսում էին խաղաղության, մեր ժողովրդին խաղաղություն բերելու եւ խաղաղություն պարզելու մասին: Խաղաղության պայմանագիրը դեռեւս խաղաղություն չի նշանակում: Մենք տեսնում ենք, թե խաղաղության օրակարգն ինչպիսի խաղաղություն է բերում ՀՀ-ում, ԱՀ-ում: Երբ փորձում ենք խաղաղության պայմանագրի մասին խոսել, պարտավոր ենք հստակեցնել, իսկ ո՞րն է գինը: Եթե այդ գինն Արցախն է, ապա դա անընդունելի է: Ամեն ինչ պետք է անենք, որ նման ձեւով խաղաղության պայմանագիր չստորագրվի:

ՀՀ-ն իր իրավական փաստաթղթերում վաղուց ամրագրել է, որ ինքը Արցախի անվտանգության երաշխավորն է՝ դեռեւս 1989թ. դեկտեմբերի 1-ի որոշումով, 1992թ. Գերագույն խորհրդի որոշումով, 1991թ. օգոստոսի 23-ի ՀՀ անկախության մասին հռչակագրով եւ տարբեր իրավական փաստաթղթերով:

Արդեն սոցիալական մեղիայում, տեղեկատվական դաշտում քննարկվում են տարբեր առաջարկներ: Խոսվում է ռուսական առաջարկի՝ Խովսեփի առաջարկի, եվրոպական կամ Շառլ Միշելի առաջարկների, Բլինքեյնի կողմից առաջարկված ամերիկյան տարբերակի մասին: Ի՞նչ են մեզ առաջարկում, արդյո՞ք այդ քննարկումների մանրամասները փոխանցվում են ԱՀ իշխանություններին: Կա Ֆրենկ Փալոնի կողմից ներկայացված տեսակետը, որ Արցախը պետք է Արդե՛ք անի կազմում լինի ինքնավար կարգավիճակով, եւ որոշակի համեմատություն է անցկացվում խորհրդային ժամանակների ԼՂԻՄ-ի հետ:

Սա՞ է արդյոք 35 տարվա հայ ժողովրդի պայքարի, ազգային-ազատագրական պայքարի այս հանգրվանի արդյունքը: Ուզում եմ մեկ անգամ եւս նշել, որ մեզ համար անընդունելի է որեւէ պայմանագրի ստորագրում, որով կասկածի տակ կարող է դրվել ԱՀ գոյության փաստը, որով կարող է կասկածի տակ դրվել Արցախի անկախ պետականության իրողությունը: Հայաստանի որեւէ իշխանություն չի կարող նման բան անել: Ես վստահորեն ասում եմ, որ այդպիսի փաստաթղթի ստորագրումը կունենա համապատասխան հետեւանքներ: Մենք ամեն ինչ պետք է անենք, որ այն սկզբունքներով եւ այն բովանդակությամբ, որով նախատեսվում է պայմանագրի ստորագրումը, չդառնա իրականություն: Այդ պայքարը կլինի Արցախից, Հայաստանից, թե Սփյուռքից՝ եական չէ, բայց վստահ եմ, որ այդ ուղղությամբ համապատասխան ջանքեր կգործադրվեն:

- Արցախում պետականության պահպանման համար կա՞ արդյոք միասնականություն: Քաղաքական ուժերն ու հոսանքները արդյո՞ք պատրաստ են համախմբվել այս գաղափարի շուրջ:

- Ընդհանուր առմամբ՝ այո՛: Ինչպես ՀՀ-ն, այնպես էլ ընդդիմադիր դաշտի մյուս կուսակցությունները լուրջ դերակատարություն ունեն այդ միասնականությունն ապահովելու գործում: Զեմ ուզում թերագնահատել իշխանական կուսակցություններին, բայց նախաձեռնությունների հիմնական բաժինն ընդդիմադիր դաշտի կուսակցություններին է: Ցանկալի կլինեք, որպեսզի բոլորի կողմից լինեին այս նախաձեռնությունները: Սա իշխանության վերապահված գործառույթ է, եւ ինքը պիտի նախաձեռնի: Տարբեր նախաձեռնություններ, որոնք արտահայտվում են հայտարարությունների տեսքով, ի հայտ են գալիս միասնական դաշտում: Պատահական չէ, որ հետպատերազմյան շրջանում գրեթե բոլոր հայտարարությունները եւ մեր բոլոր գործողությունները միտված էին միասնականության մթնոլորտի պահպանմանը: Արտախորհրդարանական ուժերը եւս իրենց քայլերով սատար են կանգնում խորհրդարանական ուժերին: Ողջունելի է ապրիլի 14-ին Ազգային ժողովի հայտարարությանն արտախորհրդարանական քաղաքական ուժերի եւ հասարակական կազմակերպությունների կողմից միանալը: Այս ճակատագրական ժամանակաշրջանում միասնական քննարկումների եւ միասնական քայլերի մեջ է մեր հաջողությունների գրավակալը: Մենք պետք է սա ընդունենք որպես գործելաոճ, եւ անկախ նրանից, թե որեւէ քաղաքական միջոցառում որ քաղաքական ուժի նախաձեռնություն է, եթե այն ուղղված է հանուն Արցախի, պետք է գիտակցաբար միանալ ու ցուցաբերել պատասխանատու կեցվածք:

Ավելացնեմ, որ ականատես ենք եղել ՀՀ իշխանությունների կողմից Արցախի քաղաքական դաշտը տրոհելու որոշակի քայլերի: Սա այսբերգի չէրեւացող մասն է: Մենք համապատասխան ջանքեր ենք գործադրել չեզոքացնելու այդպիսի դրսեւորումները: Տեսնում ենք, թե ինչպես են ՀՀ խորհրդարանի իշխող քաղաքական ուժի ներկայացուցիչները թույն թափում Արցախի քաղաքական տարբեր գործիչների, Արցախում տեղի ունեցող իրադարձությունների վրա: Կարելու է մեր Արցախում առկա միասնականությունը եւ մեր բոլոր ջանքերն ուղղելու ենք, որպեսզի պահպանվի միասնական ճակատը:

**Զրուցեց Տաթևիկ ԱՂԱՉԱՆՅԱՆԸ
Հարցազրույցը հրապարակվել է
2022թ. հոկտեմբերի 20-ին**